ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9. 1956 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ս. ԱԱՐԻՆՅԱՆ—«ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՌԵԱԼԻԶՄԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ»*

Հայ գրականության պատմության մեջ քննադատական ռեալիզմի սկզբնավորման ու զարգացման պրոբլեմի ուսումնասիրությունը սովետական գրականագիտության գլխավոր ու էական խնդիրներից մեկն է։

Մինչև վերջերս հրապարակի վրա չի եղել մի ամբողջական, սիստեմատիկ երկ գրական ուղղությունների ձևավորման ու զարգացման պրոցեսի բնութագրման վերաբերյալ։ Ս. Սարինյանի «Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ» աշխատությունը, որը հրատարակել է Գիտությունների ակադեմիան, առաջին քայլն է այդ ուղղությամբ։ Այս աշխատությունը գրելիս, հեղինակը, անշուշտ, կանգնած է եղել շատ դժվարությունների առաջ։ Բանը այն է, որ հեղինակին հետաքրքրող հարցը սերտորեն առնչվում է 19-րդ դարի 30—60-ական թվականների հայ հասարակական-քաղաքական կյանքի բարդ իրադրության հետ, որը քիչ է ուսումնասիրված։

Իր աշխատության մեջ Ս. Սարինյանը գլխավոր հարցի առնչությամբ շոշափում է շատ պրոբլեմներ, ձգտում է դրանք լուծել մարքսիստական դիրքերից, լուսաբանում է եղած փաստերը, վերանայում գրականության պատմության մի շարք գնահատումներ, ասում իր սեփական կարծիքը։

Նախ՝ տեսնենք հեղինակը ինչպես է լուծում աշխատության գլխավոր հարցերից մեկը, այն հարցը, թե երբ է սկզբնավորվել քննադատական ռեալիզմը հայ գրականության մեջ։ Նկատենք, որ հեղինակը ոչ իր աշխատության սկզբում և ոչ էլ հետագայում քննադատական ռեալիզմի տեսությունը ընդհանրապես չի քննում, չի զբաղվում նրա բնութագրությամբ, առանձնահատկությունների վերհանմամբ։ Մինչդեռ նման տեսության անհրաժեշտությունը զգացվում է։ Վերջապես ներածության մեջ, փոխանակ միայն խոսելու այն մասին, թե հայ գրականության մեջ երբ է սկզբնավորվել քննադատական ռեալիզմը, հարկավոր էր ընդհանուր գծերով բնութագրել այն, որպեսզի ընթերցողը հենց սկզբից անհրաժեշտ պատկերացում ունենար նրա մասին։ Նման ներածության հետևանքով աշխատության մյուս մասերը որոշ չափով կբեռնաթափվեին և ապա՝ հնարավոր կլիներ այդ մասերի միջև ստեղծել ավելի սերտ կապ։

Բայց դառնանք հեղինակին հետաքրքրող հարցին։ Ե՞րբ է սկզբնավորվել ռեալիզմը հայ գրականության մեջ։ Հեղինակը քննում է եղած տարբեր կարծիքները, ժխտում ռեալիզմի սկզբնավորումը 19-րդ դարի 90-ական թվականների հետ կապելու վերաբերյալ եղած տեսակետները և զարգացնում այն միտքը, որ ռեալիզմը սկզբնավորվել է 19-րդ դարի 30—40-ական թվականներին և իբրև գրական-ստեղծագործական մեթոդ առաջին անգամ դրսևորվեց Խ. Աբովյանի երկերում։ Հեղինակը նախաաբովյանական հայ գրականության մեջ տեսնում է միայն ռեալիզմի «ուշագրավ մոմենտներ», ռեալիզմը նրա կարծիքով դրսևորվել է «տարերային ձևով և ոչ իբրև գիտակցված երևույթ»։ Զարգացնելով այն տեսակետը, որ «ռեալիզմի, որպես գրական ուղղության երևան գալը կապվում է նոր ժամանակների բուրժուական հարաբերությունների մեջ ձևավորվող գրականության հետ» (14) հեղինակը դրա հետ մեկտեղ չի ծանրանում այն հարցի վրա, որ քննադատական ռեալիզմի առաջացումը խորապես կապված էր մեր նախորդ գրականության լավագույն տրադիցիաների զարգացման հետ։ Այս իմաստով հեղինակը պարտավոր էր հանգամանորեն կանգ առնել և ըստ արժանվույն գնահատել մեր գրա-

---

* Ս. Սարինյան. *Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ*, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1955, էջ 273։

կանության ռեալիստական-քննադատական այն տրադիցիաները, որոնք դալիս են խոր անցյալից և որոնք փաստորեն մի տեսակ նախապատրաստեցին քննադատական ռեալիզմի ավելի գիտակցված էտապը։

Բնութագրելով Խ. Աբովյանի բազմահարուստ ստեղծագործությունը, Ս. Սարինյանը գրում է. «Խ. Աբովյանը հիմք դրեց ոչ միայն հայ ռեալիստական արձակին, այլև հիմնադրելով հայ նոր գրականությունը, ստեղծեց քննադատական ռեալիզմի ուժեղ տրադիցիաներ» (41)։ Խ. Աբովյանի էսթետիկայի խոշորագույն նախապայմաններից մեկը հեղինակը իրավացիորեն համարում է գրաբարի մերժման և աշխարհաբարը կիրառելու սկզբունքը, բայց դրանով չի վերջանում ամեն ինչ։ Խ. Աբովյանը ռեալիստ ստեղծագործող էր, գրականությունը նա մոտեցրեց կյանքին, ծառայեցրեց ժողովրդին, իր երկերով արտացոլեց նրա կյանքը, քննադատեց ու մերկացրեց այն ամենը, ինչ խանգարում էր կյանքի պրոգրեսին։ «Նա առաջին անգամ ըմբոստացման դրոշակ է պարզում ընդդեմ բռնության և իր «Վերք Հայաստանի»-ով աշխատում է ըմբոստացնել հայ ժողովուրդը» (Հովհ. Թումանյան)։

Հեղինակը այնուհետև պոլեմիկա է տանում Աբովյանի ստեղծագործական մեթոդի վերաբերյալ, մերժում այն բոլոր կարծիքները, որոնց համաձայն Խ. Աբովյանը դիտվում է իբրև ռոմանտիկ։ Աշխատության մեջ կան հետաքրքրական դիտողություններ ռոմանտիզմի և ռոմանտիկական պաթոսի վերաբերյալ։ Մենք բաժանում ենք հեղինակի այն կարծիքը, որ Աբովյանին հիմնականում պետք է համարել ռեալիստ։ Մյուս կողմից Աբովյանի երկերում կա ակտիվ հերոսացնող ռոմանտիզմ, որը ոգևորել է սերունդներին, հուզել ու շարժել մտքերը։ «Վերք Հայաստանին»— գրել է Ավ. Իսահակյանը — հեղեղեց և կրակ ու բոց որոտաց, և շարժեց հայ ժողովրդի ներաշխարհը բովանդակ, և կայծակի նման ճեղքեց ապագայի մութն ու մռայլը, ցույց տվեց փրկության ուղին»... Դա հենց այն ակտիվ ռոմանտիզմն է, որին Ս. Սարինյանը անվանում է ռոմանտիկական պաթոս։

Անցնելով հաջորդ շրջանին՝ 50—60-ական թվականներին, հեղինակը հանգամանորեն բննում է «Հյուսիսափայլ»-ի դերը հայ քննադատական ռեալիզմի զարգացման գործում։ Այստեղ նա բնութագրում է գրական կարևոր հոսանքների՝ ռեակցիոն ռոմանտիզմի, պրոգրեսիվ ռոմանտիզմի և քննադատական ռեալիզմի ներկայացուցիչներին, գծում նրանց միջև եղած պայքարը, որի մեջ դրսևորվում էին հասարակության տարբեր խավերի շահերն ու տենդենցները։

Այստեղ ընթերցողը գտնում է նոր, համարձակ, համոզիչ մտքեր, փաստարկներ «Հյուսիսափայլ»-ի շրջանի գրողների, հրապարակախոսների, բանաստեղծների վերաբերյալ։ Առանձնապես երկար նա կանգ է առնում պրոգրեսիվ ռոմանտիզմի հոսանքի գնահատման վրա։ Այս իմաստով ճիշտ է որոշված Ստ. Նազարյանի կատարած դերը հայ պրոգրեսիվ գրականության զարգացման գործում, ցույց են տրված նաև Ռ. Պատկանյանի, Ալիշանի, Շահազիզի և մյուսների պոետական երկերի արժանիքները։ Չնայած այդ բանաստեղծների տարբեր խառնվածքին ու ռոմանտիկական ուղղությանը, նրանցից ամեն մեկը հայ գրականությանը բերեց նոր մոտիվներ, տրամադրություններ ու թեմատիկա, օբյեկտիվորեն նպաստեց ռեալիստական մտածողության զարգացմանը։ Ռ. Պատկանյանի ռեալիստական բանաստեղծությունները, նրա կողմից երգիծանքի ժանրի ստեղծումը, Ս. Շահազիզի «Լևոնի վիշտը», և այլ երկեր ցույց են տալիս պոեզիայում քննադատական ռեալիզմի տենդենցների ուժեղացումը։ Հիշվում են նաև «Հյուսիսափայլ»-ի շուրջը խմբված գրողների (Գ. Բարխուդարյան, Մ. Բուդաղյան, Հ. Քուչուբեկյան և այլն) գործերը, հատկապես Դ. Տեր-Հովհաննիսյանի «Տեր-Սարգիս» հռչակավոր վեպը։

Ուշագրավ և հետաքրքրական են 60-ական թվականների գրական-հասարակական կյանքի վերաբերյալ դիտողությունները։ Հիմնավորվում է այն միտքը, որ «Հյուսիսափայլ»-ից հետո, 60-ական թվականներին արդեն մեր գրականության մեջ հաղթանակում է պրոգրեսիվ ուղղությունը։ Առաջավոր միտքը ամուր կառչում է ռեալիստական գրականության գաղափարին։ Մամուլում ավելի ու ավելի է գիտակցվում ու ընդգծվում գրականության հասարակական կոչման, դերի և նշանակության հարցը, Մ. Նալբանդյանի և «Հյուսիսափայլ»-ի պաշտպանած ռեալիզմի պահանջը ընդունվում է մեծամասնության կողմից։ Անգամ մամուլի այնպիսի օրգաններ, ինչպես «Կոռնկ հայոց աշխարհի»-ն և «Մեղու Հայաստանին», «Հանդես» են գալիս ռեալիզմի պահանջով։

Աշխատության մեջ հատուկ տեղ է հատկացվում այն հսկայական դերին, որ խաղացել է Միքայել Նալբանդյանը քննադատական ռեալիզմի զարգացման գործում։ Այս հարցը հեղինակը լայն ու խոր քննում է մեծ ռևոլյուցիոների գրական ու հասարակական գործունեությունը

արժեքավորելիս։ Միանգամայն ճիշտ ու սպառիչ գնահատական է տրվում Մ. Նալբանդյանի սոցիալական պոեզիային, սատիրական արձակին և չափածոյին, մարտական հրապարակախոսությանը, նամակներին, հիշատակարաններին, հոդվածներին ու գրաքննադատական աշխատություններին։

Առանձնապես արժեքավոր է Մ. Նալբանդյանի գրական-էսթետիկական հայացքներին նվիրված գլուխը, որով փակվում է սույն աշխատությունը։ Հեղինակը մեծ ռևոլյուցիոներ-դեմոկրատին բնութագրում է իբրև խոշորագույն տեսաբան ու գրական քննադատ, որը շարունակելով Աբովյանի տրադիցիաները և ոգեշնչվելով ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատների (Չերնիշևսկի, Դոբրոլյուբով) գաղափարներով, առաջադրեց ու հիմնավորեց ռեալիստական էսթետիկայի իր սկզբունքները, դրանք բարձրացնելով ռևոլյուցիոն-դեմոկրատական էսթետիկայի մակարդակին։

Գրքի արժանիքներից ենք համարում նաև այն, որ հեղինակը հայ գրականության հարցերը քննում է նրա երկու հատվածների՝ արևելյան և արևմտյան — սերտ կապի ու փոխներգործության մեջ։ Աշխատության մեջ առանձին գլուխ է նվիրված 50—60-ական թվականների արևմտահայ գրականության բնութագրմանը։ Հեղինակը ընդգծում է արևմտահայ ռեալիզմի կոնկրետ առանձնահատկությունները, այն պայքարը, որ տեղի ուներ գրական տարբեր հոսանքների միջև։ Բնութագրվում է ռեակցիոն հոսանքի գրականությունը (Հեքիմյան, Թերզյան, Գալֆայան, Հիսարյան, Խանսանամյան և այլն) և մամուլը («Երևակ»)։

Ընդհանրապես ճիշտ գնահատելով 60-ական թվականների քննադատական ռեալիզմի դրական նոր երանգները և անելով հետաքրքրական դիտողություններ դրական հերոսի հարցի վերաբերյալ, հեղինակը, սակայն, երբեմն ընկնում է որոշ ծայրահեղությունների մեջ, երբ միևնույն մակարդակի վրա է դնում ռևոլյուցիոն-դեմոկրատ Նալբանդյանին և դեմոկրատ Ղ. Աղայանին և նրանց մեթոդը համարում է միևնույն որակի, ակտիվ ռեալիզմ, ըստ որում, ակտիվ ռեալիզմի նրա տեսությունը հանգում է այն մտքին, որ եթե գրողը իրականության քննադատությունը տալով (անկախ թե նա ինչ խորությամբ է այդ կատարում) ուղիներ ցույց չի տալիս, կամ դրական հերոսներ չի ստեղծում, ապա՝ դառնում է պասսիվ ռեալիստ։ Նա Գոգոլի դիմակներ պատռող ռեալիզմը չի համարում ակտիվ, մոռանալով, որ նրա ստեղծագործությունը հսկայական ճանաչողական, դաստիարակչական ակտիվ դեր խաղաց ռուս հասարակական կյանքում։ Հեղինակը վկայակոչում է Չերնիշևսկուն, սակայն վերջինս խոսում է ոչ թե 30—40-ական թվականների ռեալիզմի պասսիվության, հայեցողական բնույթի, այլ նրա մի շարք առանձնահատկությունների մասին, որոնց համեմատությամբ 60—70-ական թվականների ռեալիզմը դարձավ զարգացման մի նոր էտապ և իր կոնկրետ արտահայտությունը գտավ ռևոլյուցիոն դեմոկրատական գրականության մեջ։

«Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ» աշխատությունը զերծ չէ նաև այլ թերություններից։ Սակայն իր ամբողջության մեջ այս գիրքը օգտակար դեր կխաղա 19-րդ դարի հայ գրականության մի շարք պրոբլեմների խոր ուսումնասիրության և լուծման գործում։

Այս իմաստով ողջունելի է և խրախուսանքի արժանի հեղինակի կատարած աշխատանքը։

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ